մութեան անհրաժեշտութեան ինքնաճանաչութիւնը, նրանց, այդ ունևորների պարտքն է իրանց նիւթական կարողութեամբ, իրանց մտաւոր անձնական աշխատութեամբ լինել հասարակութեան առաջնորդներ։

Մենք չենք խօսում հին սերունդին պատկանող մեր ազգէտ հարուստների մասին, մեր գանագան Անանօվների, Սանասարօվների, Միրզօեվների, Զիթախօվների, Կրասիլնիկովների և այլ սրանց նմանների մասին։— Սրանց անձնական մտաւոր աշխատանքը, քանի որ նրանք միայն հարստանալու համար բնական խելք ունեն, բայց ոչինչ լուսաւորութիւն չունեն, ի հարկէ, անկարող է մեզ որ և է կերպով առաջնորդելու, նրանք կարող էին, եթէ չոր ու ցամաք էգոիստներ չը լինէին, միայն իրանց փողով օգնելու այս կամ այն մտաւոր ձեռնարկութեանը։ Բայց դժբաղդաբար սրանց որդիներն էլ, որոնք կարծում են թէ պատկանում են լուսաւորված նոր սերունդին, այն տեսակ դաստիարակութիւն և կրթութիւն են ստանում, որ դառնում են իրանց հայրերից էլ եսական, անտարբեր դէպի ազգի կարիքները, իրանց հայրերի ձեռքով դիզած փողերը զուր տեղ շռայլ և աննպատակ կեանքի վրա վատնողներ.... Սրանց վրա մենք աւելի պակաս յոյս ունենք, քան թէ, մինչև անգամ, նրանց ազգէտ հայրերի վրա։

Միջին ունևոր դասակարգի լուսաւորված հայ երիտասարդներին և օրիորդներին ենք դիմում. ձեր պարտաւորութիւնն է, քանի որ մեզանում չէ վարձատրվում մտաւոր գործունէութիւնը, յանձ առնել ձեր նիւթական կարողութեան և ձեր անձնական աշխատանքի օգնութեամբ մտաւոր առաջնորդներ դառնալ դեռ ինքնաճանաչութեան զգացմունքից զուրկ, մտաւոր կեանքը աւելորդ բան համարող, թշուառ և անբարոյականացրած ազգի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Տաթևու վանք, 23 յուլիսի

Ամսոյս 20-ին, երկուշաբթի, մօտ ժամի մէկին, այստեղ պատահեցաւ բաւական մեծ երկրաշարժ։ Մի րոպէում երեք զարկ կրկնվեցաւ միմեանց ետևից զարմանալի արագութեամբ։ Վերջին զարկից յետոյ լսվեցաւ մի սոսկալի որոտումն, իբրև հազարաւոր կառքերի արագ ընթացքի ձայն։ Հաւաքած տեղեկութիւններից երևում է որ՝ այս երկրաշարժը եղել է Տաթևու ամբողջ վիճակում, գուցէ և ուրիշ տեղերում։ Տեղ տեղ այնչափ սաստիկ է եղել որ՝ օրինակ Տաթևու սարի լանջի վրա մի բաւական տեղ փուլ է եկել, Սվարանց գիւղում ամրաշէն եկեղեցու պատերը ճաքել են, և այլն։

Արժանի է ուշադրութեան այն տպաւորութիւնը, որ գործում է երկրաշարժը։ Ես, Տաթևու վանքի միաբանների և այլ ուխտաւորների հետ գնացել էինք այդ օրը ուխտ մօտակայ վանքը, որ կոչվում է Մեծ Անապատ։ Մինչդեռ ճաշի նստած էինք մօտ 15—20 հոգի սալայատակ գետնի վրա, յանկարծ շարժվեցան մեր տակի քարերը։ Ակնթարթ արագութեամբ ուրախ խօսակցութիւնը տեղի տուեց մի գերեզմանային լռութեան։ Դեռ ևս մինչև անգամ բոլորովին չեն սկսվել։ Զը նայելով, որ Անգլիան շատ անգամ յիշեցնում էր Բ. Դրանը նրա պարտականութիւնը, վերջինը կողմնակի պատասխաններ էր տալիս, աշխատելով առաջն առնել այն հարցի, որի լուծելը գուցէ իր ոյժերի համեմատ չէ։ Բ. Դուռը երբեմն պատճառ էր բերում, թէ առաջ անհրաժեշտ է վերջնական սահման որոշել Թիւրքիայի և Ռուսաստանի մէջ, երբեմն Հայաստանի մէջ եղած սարսափելի սովն էր պատճառ բերում, երբեմն քիւրդերի ապստամբութիւնը և նրանց պատերազմը պարսիկների հետ, իբրև պայմաններ, որոնք խանգարում են վերանորոգութիւնների ըստ կսելուն։ Միւս կողմից հայերի և մանաւանդ նրանց ինտելիգենցիայի անհաբերութիւնը հետզհետէ սաստկանում էր։ Հէնց որ նրանց շահերը պաշտօնապէս մտան միջազգային դաշնագրի մէջ, նրանք չէին կարող երկու ձեռքով չը բռնել այդ իրաւաբանական կարելութիւնը նրանց ազգային վիճակը բարելաւելու համար։

Վաղուց կորցրած լինելով իրանց ազգային անկախութիւնը, հայերը շատ քիչ անգամ փորձել են վերականգնել այդ անկախութիւնը։ Ճարպիկ, արդիւնաբերող և առևտրական ժողովուրդ լինելով, հայերը կարողացել են ամեն տեղի հետ յարաբերութիւններ կապել և հարստանալ, այդ կողմից հրէաներին յիշեցնելով։ Բայց Թիւրքիայի մէջ նրանք առանձին ոյժ են ձեռք բերել։ Թիւրքիայի մէջ նրանց կարելի է պատահել բոլոր հիմնարկութիւնների մէջ, որտեղ նրանք համեմատաբար բարձր պաշտօններ չեն վարում, որոնց ստանալու համար նրանք պէտք է մահմետականութիւն ընդունէին։ Նրանց այնտեղ չեն սիրում շահասիրութեան և խորամանկութեան համար, ինչպէս ուրիշ տեղերում հրէաներին չեն սիրում, բայց մի և նոյն ժամանակ առանց նրանց չեն կարող ապրել, որովհետև նրանք պիտանի մարդիկ են դարձել և պէտք է խոստովանել, որ վերջին ժամանակներում մեծ առաջադիմութիւն են գործել մտաւորապէս և քաղաքականապէս։

Հայոց հարցը բարձրացրած է և պաշտպանվում է գլխաւորապէս նոյն իսկ հայերի կողմից և մեր ժամանակներում չէ կարելի նրա վրա ուշադրութիւն չը դարձնել և դրականապէս չը նպաստել նրա լուծելուն։ Հայերի գլխաւոր մտաւոր ոյժերը գտնվում են Կ. Պոլսի, Վենետիկի և գլխաւորապէս Թիֆլիսի մէջ, որտեղ նրանք քաղաքային ազգաբնակութեան կէսն են կազմում։ Ընդանցից այնպիսի անձնաւորութիւններ են պատահել, որոնք իրանց ամբողջ հարստութիւնը գործ են դրել իրանց հայրենակիցների և հայոց ինքնավարութեան գաղափարի համար։ Դեռ ևս անկարելի է նախատեսել, թէ ժամանակով այդ շարժումը ինչպիսի հետևանք կունենայ։ Բայց առաջուց կարելի է ասել, որ ընդունակ, գործունեայ և ինքնաճանաչութեան հասած մի ազգութիւն չէ կարող երկար ժամանակ սարուկ մնալ։

Աւելի էլ կասենք. այսուհետև այդպիսի մի ազգութեանը սարկութեան մէջ պահելը համապատասխան չէ այն պետութիւնների ուղղակի շահերին, որոնց իշխանութեան տակ նրանք գտնվում են։ Եթէ Թիւրքիան չէ կամենում բարելաւել և վերանորոգել հայերի կառավարելու եղանակը, դրա փոխարէն Ռուսաստանը կարող է այդ գործին ձեռնարկել, որ նրա չափ հաւասար քաղաքական իշխանութիւն ունի հայերի վրա։ Միջազգային և պատերազմական կողմերից անվտանգ հայոց ազգութիւնը կարող է Ռուսաստանի ամենաօգտակար դաշնակիցը լինել, իբրև Կովկասի ազգաբնակութեան ամենագործունեայ և կուլտուրական տարր։ Ռուսաստանը կարող է նշանաւոր ազդեցութիւն ունենալ Թիւրքիայի հայ ազգաբնակութեան վրա, որ տանջված է Թիւրքաց վարչական անկարգութիւններից և քիւրդերի կամայականութիւններից, եթէ Կովկասի հայ ազգաբնակութեանը այնպիսի իրաւունքներ կը տայ, որոնք կը համապատասխանեն Կովկասեան այլ ազգութիւնների հասարակական ազատութեանը և տնտեսական բարօրութեանը։

Մենք նախատեսում ենք այն պատասխանները, որոնց կը տան մեր այս կարծիքին հայոց խնդրի վերաբերութեամբ։ Մեզ կարող են ցոյց տալ հայոց բնաւորութեան թոյլ կողմերը, որոնց մենք վերևը յիշեցինք, նրանց անչափաւոր պահանջները և իշխանասէր ձգտումները։ Բայց այդ պատասխանները դժուար չէ հերքել. Ռուսաստանից է կախված թոյլ տալ, որ զարգանան իր հրպատակ ազգութեան այդ թոյլ կողմերը, այդ անչափաւոր պահանջները և իշխանասէր ձգտումները։ Նրանք առհասարակ զարգանում են և դառը պտուղներ են տալիս այնտեղ, որտեղ յարաբերութիւնները հաւասար իրաւունքների վրա չեն հիմնված, որտեղ պատահմունքները և կամայականութիւնը փոխարինում են օրինական կարգերին և սիստեմապէս որոշված գործողութեան եղանակին։ Միայն այսպիսի դէպքերում մի հպատակ ազգութիւն, եթէ նա խելօք և ճարպիկ է, ոչ թէ միայն միւսաւելի քիչ զարգացած և ընդունակ ցեղերի, այլ և նոյն իսկ տիրապետող ազգութեան գլխին է նստում...

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Միացեալ Ընկերութեանց Կեդրոնական ժողովոյ ԺԹ նիստը տեղի ունեցաւ կիրակի, ժամ 7-ին, Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանին մէջ, ընդ նախագահութեամբ Առաքել Ալթունեանի։ Ներկայութեան 20-ի չափ երեսփոխանաց։ Անենագրութեան ընթերցումէն և վաւերացումէն յետոյ, երեսփոխան Մ. Ունձեան էֆէնտիի հրաժարականն ընդունուեցաւ։ Առաջին Ատենադպիր Պ. Անդրանիկ Այվազեանի հրաժարականն ալ ընդունուելով, յաջորդ նստին թողուեցաւ նոր ատենադպրի ընտրութիւնն։ Յետոյ Կեդրոնական ժողովոյ դիւանաց պակասեալ անդամներուն տեղ նոր ընտրութիւն կատարվելով, Օրէնսդրական դիւանի անդամ ընտրուեցան Տոքտոր Փէշտիմալճեան և Պ. Արփիար Արփիարեան, Նախաքննիչ դիւանի անդամ ընտրուեցաւ Պ. Գէորգ Ապոստոլեան և Երդեցական դիւանի անդամ ընտրուեցաւ Պ. Յ. Եուսուֆեան։ Ներքին կանոնագիրն Օրէնսդրական դիւանի քննութեանն յղել որոշվելէ յետոյ, վարչութեան տեղեկագրին անլսած մնացած 5 խնդիրներուն վրայ վիճաբանութիւն բացուեցաւ։ Այս խնդրոց կարևորագոյնն էր Յուրաբերանի տեսչին մի նամակն, որ կը պարունակէր երկու առաջարկ. տեսուչը կը խնդրէր որ Կոփայ Ս. Դանիէլի վանուց զարգացմանն համար Յնորէն ժողովը գնէ և յղէ նմա 10 Խրիմեան կովեր՝ ցուլով միատեղ, և 6 Ռուսական ձիեր՝ արուով միատեղ, և ստանձնէ նաև Մշոյ Ս. Յովհաննու վանուց տեսչութիւնն։ Վարչութեան կարծիքն ուզելով այս խնդրոյն վրայ, Յնորէն ժողովոյ ատենապետ Պ. Մինաս Չերազ յայտարարեց թէ ինք և իր պաշտօնակիցք, Միացեալ Ընկերութեանց գործին նուիրելով իրենց ժամանակ և աշխատանք, լոկ ազգասիրական զգացումէ շարժեալ են և թէ, իբր ազգասէր, չեն կարող անտարբեր մնալ Հայաստանի և Կիլիկիոյ ազգայնոց տնտեսական վիճակի բարւոքման. այլ յարեց, քանի որ իրենք պաշտօնեայ են ուսումնասիրած ընկերութեանմը, որ իւր պահեստի գումարն իսկ գործածելու ստիպուած է այժմ՝ իւր 28 վարժարաններուն ծախքը հոգալու համար, կը ցաւին որ չը պիտի կարենան հաւանիլ

որ կովերու և ձիերու համար մի քանի հարիւր ոսկիներ վատնուին այսօր, թէև համոզուած են թէ այդ անասունք կրնան օգտակար լինիլ ապագային մէջ։ Հացի խնդիրը, զոր ոմանք կը յուզեն լրագրաց մէջ, էական կարևորութիւն ունի Տնօրէն ժողովին համար, որ յայտնած իսկ է զայն իւր շրջաբերականով. սակայն, Ընկերութեան դրամական վիճակն այնքան անձուկ է, որ հարկ պիտի լինի մի քանի դպրոց փակել՝ գաւառացւոց նիւթական վիճակի բարւոքման դոյգն նպաստ մը մատակարարելու համար, և Տնօրէն ժողովոյ անդամոց պարտաւորութիւնը և խիղճը չեն ներեր որ Հայաստանի մէջ կով մը աւելցնելու համար դպրոց մը գոցեն։ Այս բացատրութեան վրայ, Կեդրոնական ժողովն որոշեց մերժել Տուրուբերանի տեսչութեան առաջին առաջարկն, և Տնօրէն ժողովոյ միջոցաւ քննութիւն բանալ Ս. Յովհաննու վանուց նիւթական կացութեան վրայ։ Միւս 4 խնդրոց նկատմամբ ալ վարչութեան որոշումներ տուին յետոյ, ատենը փակուեցաւ ժամ 11-ին, յաջորդ նիստը մի ամիսէն դումարելու որոշմամբ։

(Մասիս)

ՄԻ ԴՐԱԳՐՈՒԹԻՒՆ

„Մանդումէի Էֆքիար“ լրագրում կարդում ենք հետևեալ երկու նամակները։ Կ. Պոլսի „Միացեալ“ ընկերութեան Տնօրէն ժողովը գիմել է մեր աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսեանին հետևեալ նամակով։

„Ազնիւ Պարոն. Միացեալ ընկերութեանց նորընտիր Տնօրէն ժողովն կը ցանկայ սերտակցութիւն մ՝ունենալ Ձեր Մեծապատուութեան հետ, Ընկերութեան արդի կացութեան և ապագայ ուղղութեան նկատմամբ Ձեզ հետ խորհրդակցելու համար։ Դուք, որ ներկայացուցիչ էք „Մշակի“ պատուարժան խմբագրութեան, ում ներախտապարտ են Միացեալ ընկերութիւնք, որպէս երբեմն Արարատեան ընկերութիւնն, չը պիտի մերժէք անշուշտ մեր հրաւէր, զի վստահ եմք թէ չէք անտարբեր Միացեալ ընկերութեանց նկատմամբ, որոց այնքան օգտակար եղած էք միշտ մեր սիրելի Ռուսիաբնակ եղբարց քով։

„Ուստի յայտնելով Ձեզ թէ ամեն երեքշաբթի և հինգշաբթի, երեկոյեան տասնվեցեակ ժամ 9-էն 12, պիտի գտնէք ցմեզ Ընկերութեան գրասենեակն“։

Այս Նամակին պ. Գրիգոր Նիկողոսեան պատասխանել է հետևեալ նամակով։

„Միացեալ ընկերութիւններից արդէն մէկ ամիս առաջ ընտրված Տնօրէն ժողովը ցանկութիւն է յայտնում այժմ խորհրդակցել ինձ հետ ընկերութեանց „արդի կացութեան և ապագայ ուղղութեան“ վրա։ Որովհետև իմ բոլոր համակրութիւնս և հաճերաշխութիւնս ընկերութեանց գործերի հետ պայմանաւորված են ընկերութեան ընտրելի նոր և նպատակայարմար ուղղութեամբ, վանորոյ այն օրից, երբ այդ ուղղութեան ընդունված լինելը կը հրատարակվի, այդ օրից էլ չի մնայ ոչինչ տեղիք առանձին բանակցութեանց։ Իսկ ինչ կը վերաբերվի յիշեալ ուղղութեան, այդ մասին, կարծեմ որ, չորս ամսէ հետէ տեղիս լրագիրների մէջ հրատարակվող իմ յօդուածները, նոյնպէս և պ. Գրիգոր Արծրունու առաջնորդող յօդուածները „ՄՇԱԿԻ“ մէջ, կարող լինեն տալ Տնօրէն ժողովիդ աւելի ճիշդ և կատարեալ բացատրութիւն, քան թէ կէս կամ մի ժամվայ իմ տեսակցութիւնը։

„Գալով ընկերութեանց „արդի կացութեան“, ինչ որ նա լինի, դարձեալ նա կարող է միշտ աւելի վատակիլ, յարմարելով աւելի արդիւնաւոր ուղղութեան հետ, քան թէ մնալով նոյան հակառակ դիրքի մէջ։ Ահա՛ իմ բոլոր ասելիքս, որ կը լսէ Տնօրէն ժողովը տեսակցելով ինձ հետ թէ իր գրասենեակի մէջ և թէ, իր պատուիրակի միջոցով, իմ բնակարանումս։“

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 27 յուլիսի

Ամբողջ շաբաթ է, որ այստեղի մի օտար լրագրի մէջ սոսկալի բաներ են տպվում մի բարձրաստիճան հայ կրօնաւորի վրա, որի արժանիքը ճանաչված է համայն հայերի մէջ։ Բոտմնելի արարածներ են Կ. պոլսեցի հայերը, մանաւանդ ինտելլիգէնցիան. ամեն օր կարդալով այսչափ վիրաւորիչ բաներ հայ կրօնականի պատուի և արժանաւորութեան դէմ, ոչ միայն մի մարդ չէ դուրս գալի, որ մի տող բան գրէ իրանց արքեպիսկոպոսի պատիւը պաշտպանելու համար, այլ ընդհակառակը իրանք են նպաստում և նիւթ մատակարարում մի կաշառված հրէային անուանարկ անել որչափ կարելի է հայերի մէջ անուանի ճանաչված կրօնաւոր մարդուն։ Այս բոլոր ինտրիգաները կատարել ավոդը ոչ այլ ոք է, ապա թէ ոչ այնչափ նորերս հռչակված կաթոլիքութիւնից նոր դարձած, Էրզրումի առաջնորդ Օրմանեան վարդապետը։ Ճշմարիտ, բաղդ չունեն հայերը այդ նորադարձների վերաբերմամբ և հիմա տեսնում ենք, որ Մշակը իրաւացի էր, բողոքելով, երբ մի խումբ մարդիկների Օրմանեան վարդապետի առաջնորդութեամբ լուսաւորչականութեան դիմեցին։ Ճշմարիտ ազգասէր և սկզբունքի տէր մարդիկ սմին կրօնի մէջ էլ կարող էին նոյնը մնալ, բայց երբ դէմոնստրացիաներով ուզեցին իրանց ազգասիրութիւնը յայտնել, արդէն հէնց դրանից կարելի էր իմանալ, որ դուքա չատ էլ գոված յատկութեանց տէր մարդիկ չը պիտի լինէին. պատուները տեսնում ենք։

Բանը նորա մէջն է, որ Էրզրումի առաջնորդը դեռ իր կաթոլիկ ժամանակը ընկերութեան մտնելով տեղիս մի հրէայ փաստաբան կատրոյի հետ, ինչպէս այդ պատմում են այստեղ, յանձնառու է եղել փաստաբանել մի մեծ դրամական գատի գործ, որի մէջ մի քանի միլիոնի հարց է եղել։ Գործը տանելու համար գլխաւոր բանը մի մագաղաթեայ գոկումենտ է եղել, որը ներկայացնելով անգլիական հիւպատոսարանին հայագէտ էքսպերտների քննութեան է ենթարկվել։ Էքսպերտների մէջ գլխաւորն Խորէն եպիսկոպոս Նարբէյն է հրաւիրված եղել, որը տեսնելով պարզ ի պարզոյ գոնումենտի կեղծութիւնը, նոյնութեամբ վկայել է այդ իրան հրաւիրված հիւպատոսարանին։ Օրմանեան վարդապետը ի հարկէ սև երես է դուրս գալի այստեղ իր սուտ վկայութեան համար գոկումենտի իսկական լինելու վերաբերմամբ։ Բանը սորանով քանդվում է և մի քանի ամիս չանցած Օրմանեան վարդապետը դիմում է լուսաւորչականութեան, պահելով սակայն իր սրտի խէթը Խորէն եպիսկոպոսի դէմ, բայց չուզելով իր ատելութիւնը մէկին ցոյց տալ, մանաւանդ որ Խորէն եպիսկոպոսը նորա մօտիկ ազգականներից մինն է, Օրմանեանը ժամանակի է սպասում։ Երբ ներսէս պատրիարքը նշանակում է նորան Էրզրումի առաջնորդ, ի հարկէ դրանից լաւ պատեհ չէ լինում ինտրիգաների ծայրը ջուրը գցելու համար և ահա մեր «գիտնական» առաջնորդը սկսել է այժմ այն խաչակրաց պատերազմը Խորէն եպիսկոպոսի դէմ, որի նմանը հազիւ թէ յանձնառու լինի անել աշխարհս մէջ ամենայնտին անգամ անազնիւ հայը։

Խորէն եպիսկոպոսի դէմ ֆրանսիական «Stamboul» լրագրի մէջ անստորագիր յօդուածագիրը այնպիսի ցեխոտ լեզու է բանեցնում մի հայ եպիսկոպոսի և առհասարակ հայ մարդու յատկութեանց դէմ, որ հաւատացնում են թէ մինչև անգամ մի քանիսը դեսպաններից զարմանք են յայտնում թէ՝ ինչու Ներսէս պատրիարքը չէ միջամտում Օրմանեանի այս անօրինակ սկանդալի և անպատուութեան վերջ տալու համար։ Կրկնում եմ զարձեալ. ահա ձեզ որչափ իրաւացի էր Մշակը, շատ էլ ուրախութեան եառնդ չը յայտնելով անցեալ տարի, երբ մի մոլեռանդ հայ լրագիր մեծ «պատմական» անցք էր համարում մի քանի այստեղի հայ կաթոլիկների լուսաւորչականութեան դիմելու համար Օրմանեան վարդապետի առաջնորդութեամբ։

Այս վարդապետի արարքները Էրզրումում նոյնպէս գովելի տեսակներից չեն, այլ Էրզրումի առաջնորդութիւնը միայն ասպարէզ չինելով իր անձը Կ. Պոլսի լրագիրների մէջ փառաբանել տալու համար. նա պարապված է, գրում են Էրզրումից, միայն յօդուածներ գրելով Մասիսին «Ուղեորի» ստորագրութեամբ. երբ պիտի տեսնենք, Տէր Աստուած, մի հայ կրօնական, որ լինելով Յիսուսի օրինակը, նա պարսից խանի մտափառութիւնը չունենար իր մէջ....Այսպիսով ահա ձեզ կարճ ժամանակուայ մէջ տաճկահայոց մէջ երկու «անուանի» համարված վարդապետներ իրանց գոյները դուրս տուած. Վանայ Արուանձտեանց վարդապետը և Օրմանեանը. դէհ էլ մնացածների համար կարող էք դուք ինքներդ երևակայել. եթէ մանաւանդ իբր լաւ համարվածներից մէկին, Ռուբինեան վարդապետին իր գործով ճանաչեցիք....

Տնտեսական խնդիրը տեղիս լրագիրների մէջ օրից օր աւելի է ծաւալվում և վիճաբանութեանց ընդարձակ ասպարէզ դառնում. ինչպէս ճշմարիտ էր նկատում Մշակի մէջ պ. Ալասխանեանցը՝ որ և իցէ մի յարուցած հարց խօսք հայ լրագրութեան մէջ չէ կարող որ և է որոշ և վճռողական արդիւնքի յանգիլ. բայց գոնէ մէջ տեղ կը պրտտեն և կարծարծվեն շատ նոր տեսակէտներ և գաղափարներ յարուցած խնդրի վերաբերմամբ։ Եթէ այդ փոքր ի շատ ճիշդ լինի ռուսահայ լրագրաց համար, սակայն այդ բնաւ ճիշդ չէ կարող համարվել այստեղի հայ մամուլի համար, որը չունի մի նշոյլ անգամ լրագրական ազնուութեան։ Օրինակ. դիցուք թէ այս ինչ լրագիր մի անգամ հակառակ է յայտնել իրան Հայաստանի մէջ տնտեսական ուղղութեան մտցնելուն, այդ օրից այդ լրագիրը ոչ միայն հազար ու մէկ չինծու նամակներ կը սկսէ հրատարակել, իբր թէ Հայաստանից գրված, այլ ևս կը խեղաթիւրէ ժողովրդի առաջ այնպիսի իրողութիւններ Հայաստանի մէջ, որոնք բոլորովին այլապէս են իրանց տեղը։ Իսկ երբ կը լինեն Հայաստանից այնպիսի թղթակցութիւններ, որոնց մէջ կերևայ ժողովրդի տրամադրութիւնը և հակամիտութիւնը դէպի տնտեսագիտական և արուեստային ուղղութիւն, այդպիսի յօդուածներ երբէք չեն հրատարակվի։ Միւս կողմից եթէ նոյն լրագրին յօդուածներ կը տաս, նորա ընթերցողներին համոզելու համար, այդպիսի յօդուածներն էլ չեն տպվի. ահա այսպէս է վարվում այստեղ հայ լրագիրների մէջ առաջինը համարված Մասիսը էլ ինչ էք պահանջում մնացածներից. այսպիսի աններելի աչառութիւն ցոյց տալու դէպքում ընդհանուր հարցերի մէջ, կարող է միթէ պրոգրէս լինել ազգային գործերի մէջ. այս է գլխաւոր պատճառներից մինը, որ տաճկահայոց գործերը միշտ յոռի շրջանի մէջ են։

Ի նկատի ունենալով այսպիսի բաներ, ռուսահայ լրագրութիւնը շատ գովելի կերպով կը վարվէր եթէ յանձն առներ ինքը վիճաբանել և լուծել այն հարցերը, որոնք յարուցված են այստեղի լրագիրների մէջ. այսպիսով կարելի էր սոցա սմաչացնել տալ....

Հայկական խնդիրը գնում է կամաց կամաց ինչպէս առաջաստաւոր նաւ խաղաղ ծովի վրա. անգլիական ընդհանուր հիւպատոս գնդապետ Վիլսոն այս օրերս սպասվում է այստեղ. նրան կանչել է տուել Դիւֆերին ճիշտ և բերանացի տեղեկութիւններ իմանալու համար։ Հայաստանի կազմակերպութեան նոր ծրագրի հրատարակութիւնը սպասվում է օրից օր. ասում են, որ գլխաւոր յօդուածներից մինը այն պիտի լինի, որ Հայաստանի կառավարիչ և բարձր պաշտօնեաներ հայերից չը լինեն, այլ եւրօպացիներից. կարծեմ որ այս յօդուածը որչափ էլ թուալի լինի ազգային արժանապատուութեան կողմից, այնչափ էլ գովելի է այն տեսակէտով, որ յիրաւի Հայաստանի բուն ժողովուրդը կազատվի անպիտան էֆէնդիների ձեռքից։

Երբ Հայաստանի բարենորոգումները կիրագործվին, ինչ կը լինի արդեօք սոցա անուադարկ սահմանադրութեան հետ և ինչ կը լինեն այնչափ ընկերութիւնների մէջ ճառեր տրաքացնող և «լոյս», «լոյս» աղաղակողները. վատ չէր լինի եթէ միւս յօդուած էլ լինէր բարենորոգմանց կազմակերպութեան մէջ, որը արգելէր Կ. Պոլսի մէջ այժմ բոլոր «լոյս» և Վիկտոր Հիւգո աղաղակողներին ոտ դնել Հայաստան նորա խեղճ ժողովրդի երևակայութիւնը և գործնական խելքն էլ չը պղծելու համար։ Հարցրեցէք այս «լոյսի» վրա սիրահարներին թէ նոյն իսկ իրանց քաղաքի մէջ ունեցած ուսումնարանները և դոցա մէջ տուած «լոյսը» ինչ է, որ Հայաստանի մէջ արուելիքը ինչ լինի.... Հաւատացնում եմ ձեզ, երբեմն սոքա այնպիսի յօդուածներ և ճառեր են հրատարակում իրանց լրագիրների մէջ, որ մարդ մնում է զարմացած, բոլորովին լուրջ կերպով մտածելով թէ դոցա գրողը գժատան նստածներիցն է։ Յօդուածագիրների մի խումբ այդպիսի մարդկանց միմեանց կասեն յանկէ յանուանէ. «մեծդ հայոց Վիկտոր Հիւգո». «անմահդ դու հայոց Լիտրէ» և այլն։ Այս խենթ գրասէրների խմբի մէջ կան և տիկիններ և օրիորդներ էլ, որոնց մի քանիսների անունները երևի դուք լսել էք կամ տեսել սոցա լրագիրների մէջ. ահա այսպիսիներից է բաղկացած այստեղի «լուսատու» բոլոր ընկերութիւններն էլ և ազգային ժողովն էլ. ահա ինչ ասել է Կ. Պոլիսը Հայաստանի իրական յառաջադիմութեան համար։

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յուլիսի։ Օգոստոսի 1-ից Ս. Պետերբուրգի մէջ կը սկսի հրատարակվիլ ամեն օր առանց սկզբնական ցենզուրայի մի նոր լրագիր „Новая Газета“ վերնագրով Մօսկաստովի խմբագրութեամբ։ Գոմանակատոր հասցէն. Բասսէյնայա, տուն Կրաեվսկու։

ԼՕՆԴՕՆ, 31 յուլիսի։ Էմիրը Կաբուլից ուղարկված է կելատ։ Նոր օգնական զօրքեր ստանալուց յետոյ նրա դրութիւնը լաւացել է։

ՓԱՐԻԶ, 31 յուլիսի։ Ալժիրիայից ստացված տեղեկութիւնների համեմատ Ֆրանսիացիները հրաժարվել են Սուսա գրաւելու դիտաւորութենից, որի բնակիչները յայտնեցին իրանց հաւատարմութիւնը բէյին։

ԼՕՆԴՕՆ, 1 օգոստոսի։ Անգլիական համայնքների ժողովի և լորդերի ժողովի մէջ անհամաձայնութիւն է ծագել իրլանդական կալուածական նոր օրէնքի վերաբերութեամբ։ Մինիստրների խորհուրդը կը հաւաքվի խորհրդակցելու պարլամենտական դժուարութիւնների առիթով։ „Times“ կարծում է, որ եթէ համաձայնութիւն չը կայանայ, մինիստրութեան հրաժարականը կամ պարլամենտի արձակելը անհրաժեշտ կը լինի։ Մի քանի լրագիրներ կարծում են, որ կառավարութիւնը պէտք չէ որ զիջումներ անէ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի։ Պետական բանկի կառավարիչ Լամանսկի արձակված է ծառայութենից իր խնդիրքի համեմատ։ Նրա տեղ նշանակված է կրեդիտի գրասենեակի նախկին դիրեկտոր Ցիմանն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 օգոստոսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ Մօսկվայում հրատարակվող „Русскій Курьеръ“ լրագիրը ստացել է երրորդ նախազգուշութիւն և դադարեցրած է չորս ամսով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75½ կ., չորրորդ 94 ր. 12½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 228 ր., երկրորդ 226 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 50 կ., երկրորդ 91 ր. 50 կ., երրորդ 91 ր. 62 կ., ոսկի 7 ր. 80 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25,62 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 218 մարկ 75 պֆ.։ Փարիզի վրա արժէ 269 ֆրանկ 75 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը շատ ամուր է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ